

ՄԵՆԿ

Տարեկան գինը 10 բուրլի, կէս տարվանը 6 բուրլ.
Առանձին համարները 7 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисть. Редакция «Мшакъ».
կամ Tiflis, Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն)

Յայտարարութիւն ընդունուած է ամեն լեզուով.

Յայտարարութիւնները համար վճարում են
իրաքանիւր բառին 2 կոպէկ.

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երբեմն հարցը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նա-
մակ Պիտաղորդից. Նամակ խմբագրին. Ներքին
լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Ազգային ժողո-
ւի նիստը. Վանի նոր փոխանորդը. Ճանապարհ-
որդութիւն դէպի Մասիս. Նամակ Պարսկաստա-
նից. Արտաքին լուրեր.— ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱ-
ԳԻՐՆԵՐ.— ԲՕՐՄԱ.— ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱ-
ՍՄԻՆԿԱՆ. Գաւառական նամակներ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Երբեմն մի կրօնական գործողութիւն է,
որը բղկում է մարդու խոր, կրօնական
խղճից, որը անբաժան է այն անկողնուկի
համոզմունքից, որ իր դաւանութեան ծէ-
սերին համեմատ երգում տալով միայն
մարդ պարտաւոր է զուտ ճշմարտութիւնը
վկայել, այլ ևս չէ կարող սուտ ասել, չէ
կարող սուտ վկայութիւն տալ, այլ պէտք
է զուտ ճշմարտութիւնն ասել: Հաւատ ու-
նեցող մարդու համար երգում տալ՝ նշա-
նակում է իր խղճի հետ մի անդրդուկի
պայմանաւորութիւն կապել, նշանակում է
յոթանգ ոչ թէ մարդկանց, այլ Աստուծու
առջև:

Գաղափարական պրակտիկայի մէջ շատ
անգամ պատահել են հետեւեալ դէպքեր.
մի վկայ անորոշ, հակասող, խուսափող
ցուցմունքներ է տալիս սկզբնական քննու-
թեան ժամանակ, իսկ բուն դատավարու-
թեան ժամանակ որոշ, զրական է պարզ
ցուցմունքներ է տալիս: Նախագահը նրան
հարցնում է թէ ի՞նչի իր պիտան ցուց-
մունքները հակառակում են իր նախկին
ցուցմունքներին և ահա խոր կրօնական
հաւատ ունեցող մարդը միմիայն կերպով
պատասխանում է. «այն ժամանակ ես
ցուցմունքներ էի անում առանց նախապէս
երդմբելու, իսկ հիմա, երդմբելուց յետոյ, խո-
սում եմ Աստուծու առաջ»:

Ահա բնաւորիչ մի դիժ հաւատ ունեցող
մարդու համար. «Գանի որ երդմբելի,
պէտք է ճշմարտութիւնն ասեմ...»
Եթէ հաւատով մարդու խղճի համար

երգումն ունի այդ տեսակ պարտաւորե-
ցուցիչ բարոյական նշանակութիւն, ուրեմն
այդ տեսակ մարդու համար միայն այն եր-
գումը նշանակութիւն ունի, որը կատար-
վում է իր կրօնի, իր եկեղեցու ծէսերի, իր
դաւանութեան համեմատ:

Հաւատ ունեցող մարդու այդ հոգեկան
տրամադրութիւնը, մարդկային սրտի հոգե-
կան արտայայտութիւնների այդ պիտոյո-
ղիական երեւոյթը՝ շատ լաւ է ըմբռնել
նոյեմբերի 20-ի, 1864 թ-ի դատաստա-
նական կանոնադրութիւնը, որը իր 711
յօդուածում ասում է թէ «Երբեք անհրաժեշտ
մարդ պիտի երդվի իր դաւանութեան ծէ-
սերին համեմատ»: Եւ միայն այն ժամա-
նակ դատարանի նախագահը ինքն կարող
է երդմբել վկային, երբ բացակայ է այս
կամ այն դաւանութեանը պատկանող քա-
հանան (յօդ. 715):

Եթէ այդպէս է, ուրեմն, մեր կարծիքով,
հարկաւոր չէ պահանջել, որ հայ քա-
հանան երդմբել հայ վկաներին ուսուե-
րէն լեզուով: Եթէ հայ-լուսաւորչակա-
նք պիտի օրէնքի զօրութեամբ երդվի
իր դաւանութեան ծէսերին համեմատ,
ուրեմն նա պիտի երդվի հայերէն լե-
զուով. քանի որ հայոց լեզուն անբաժան
է հայոց եկեղեցու բոլոր ծէսերից և արա-
րողութիւններից և այդ բոլոր ծէսերն ու
արարողութիւնները կատարվում են հայե-
րէն լեզուով, և ոչ թէ ռուսերէն լեզուով:

Եւ օրէնքի ո՞ր յօդուածի հիման վրա
կարելի է պահանջել, որ հայ-լուսաւորչա-
կան եկեղեցականը կատարէ իր դաւանու-
թեան ծէսերը կամ արարողութիւններից
մէկը ու մէկը պէտքեւ լեզուով: Ուրեմն
Ռուսաստանում կատարէ ռուսերէն լեզուով,
Գալիցիայում լեհերէն լեզուով, Ուկրաինա-
յում՝ ուկրաիներէն լեզուով, Հնդկաստա-
նում՝ անգլիերէն լեզուով, Պարսկաստա-
նում՝ պարսկերէն լեզուով, Թիւրքիայում՝
թիւրքերէն լեզուով:

Ռուսաց օրէնսդրութեան ոչ մի հատ օ-
րէնք չէ պահանջում, որ ռուսահպատակ

այլադաւանները կատարեն իրանց եկեղեցա-
կան ծէսերն ու արարողութիւնները պետա-
կան լեզուով, իսկ եկեղեցական երգումը
կրօնական ծէսերից ու արարողութիւննե-
րից մէկն է:

Ապա չէնք կարող չը շօշափել այստեղ և
մի այլ խնդիր: Ռուսաստանում առ. այժմ
չը կայ ոչ քաղաքացիական պատկ, ոչ քա-
ղաքացիական թաղում, ոչ քաղաքացիական
մկրտութիւն, ուրեմն չը կայ և քաղա-
քացիական երգում: Եւ եթէ դատաստանական
օրէնսդրութեան 715 յօդուածը ընդունում
է, որ քահանայի բացակայութեամբ միայն
դատարանի նախագահը ինքն կարող է
երդմբել վկաներին, նոյն տեսակ համեմ-
բողութեան ոգով օրէնքը նայում է և այն
տեսակ բացառիկ դէպքի վրա, երբ մի յեա
ընկած տեղում, որտեղ չը կայ քահանայ,
մի երեսայ մերձ ի մահ հիւանդ լինելով՝
ծնողները, կամ որ և է աշխարհական
քրիստոնէայ մկրտում են երկաթային խոյնա-
նման օրէնքը հրատարակած է նորերում,
ինչպէս մեզ հայրերը է հեռագիրը (տես
«Մշակ» № 62) և թաղման վերաբերմամբ.
«Քրիստոնէական թաղելու առանց քրիս-
տոնէական ծէսերը կատարելու, այն դէպ-
քում երբ հոգեւոր անձն հրաւիրել
չ'ն աւ աւ ու է, և այդ տեսակ քային ա-
նելը առանձին դժուարութիւն լինի-
ն և ի հետ կապված չէ՝ պատժվում է
բանտարկութեամբ երեք շաբաթից մինչև
3 ամիս ժամանակով»:

Ուրեմն դրանց պարզ է, որ ներկում է
առանց քահանայի թաղումը միայն այն
դէպքում, երբ ոչ մի հնար չը կա քահա-
նայի հետ յարաբերելու:

Արդեօք դա նոյնանման երեւոյթ չէ՞ և
երբեմն վերաբերմամբ, միայն այն ժամա-
նակ դատարանի նախագահը, առում է օ-
րէնքը, կարող է ինքն երդմբել այլադա-
ւան վկային, երբ դատարարութեան տեղում
չէ գտնվում վկայի կրօնին պատկանող քա-
հանայ:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԳԱՒԱՌԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Նոյնանման երեւոյթը դուք կը նկատէք և մեր հա-
տարակութեան մէջ, երբ ընտրվում է ուսումնա-
րանի կամ եկեղեցու մի հոգաբարձու, կամ մի
տանուտէր, կամ մի ջրպետ,—այդտեղ էլ դար-
ձեալ նոյն ազգակցական շահերը, նոյն դանդա-
նները, նոյն աղմուկը, նոյն դատարկ, անբովան-
դակ և անվերջ ազդեցություն:

Ահա, ընթերցող, այն մի քանի խնդիրներն ու
հարցերը, որոնց շուրջը, այնպէս նեղ ծաւալով
կենտրոնացնում է մեր հասարակական կեանքը,
այն այն փոքրիկ աշխարհը, որի մէջ իր ազատ
որբում ապրում է մեր հասարակութիւնը:

Ընտրողական իրաւունքը մեր երկրում, բացի
այն որ առանձին նոր պարմաներ ստեղծեց
մեր կեանքի համար, շատ բան փոխեց, շատ
բան ոչնչացրեց, նորոգեց, բայց և մի տե-
սակ բարեբան մէջ գցեց մեր հասարակական
միջավայրը: Մեր հասարակութեան միակ զբաղմունքն
է զիջական պաշտօնեաների գործունեութեան
փնտջումը, նրանց վրա անվերջ դանդաղանք
ապրել, միւս կողմից այս վերջիններին անմիտ
պաշտպանել: Պակաս տեղ չեն բռնում հասա-
րակութեան զիջողականութեան մէջ և պետական
պաշտօնեաները, զլիսաւորապէս պոլիցիականնե-
րը, դատաստանական իշխանութեան պատկանող
մարդիկ, որոնք շարունակ գործ ունենալով ժո-
ղովրդի ամեն տեսակ ծաղրի հետ, միշտ ծա-
ծաւորում են հասարակութեան հետաքրքրութեան

մէջ: Ամեն տեսակ նորութիւն, որ վերաբերվում
է այս կամ այն պաշտօնեային, կամ կառավար-
չական այս կամ այն կարգադրութեանը, դաւա-
ռի, գիւղի մասին, դուք կը գտնէք այդ հասա-
րակութեան մէջ, այդտեղ դուք կարող էք լսել,
թէ ինչ մարդիկ, գիւղացիներից ի հարկէ, այսօր
գնացել են դաւառական վարդութեանը, ովքեր են
կողմ դատաստանական քննիչի մօտ, ով է պատ-
րաստվում վաղը, միւս օրը գնալու նոյն տեղե-
րը, ով ինչու համար գնաց, ինչպէս դաւառակե-
տը հայտնեց Վերակալին և հրամայեց դուրս գցել
անհեղինակ, ինչպէս Մարկոսը երեսը պնդեցրեց և
դաւառակեց ինչ բան չը մնաց, որ չափի Վի-
րակոսի մասին, ինչու այս ինչ տանուտէրի վրա
այդքան ժամանակ տեղեց դանդաղեց և մինչև
այժմ ոչինչ հետեանք չուներ, անշուշտ այս
ինչի բանը կը լինի, նկատում է մի այլ մարդ,
այս ինչը այս ինչի կողմն է պահում, միւսը մեր
կողմը, և այլն և այլն: Ահա, ընթերցող, այն ան-
վերջ հարց ու պատասխանները, որոնք ինչպէս
տեսնում էք, մի բնաւորութիւն, մի խոտրիս, մի
աստուռ ունեն. այդ խնդիրները շարունակ հետա-
քրքրում են մեր հասարակութեան մի մասը, նը-
րանք տարուց տարի նորոգվելով մեր բանասի-
րութեան մէջ, միշտ զբաղեցնում են մեզ, միշտ
հետաքրքրութիւն չարժում, միշտ ալիքովում,
միշտ մի տեսակ կենդանութիւն պահպանում մեր
նեղ, այդ անձնական, մասնաւոր բնաւորութիւն
ունեցող հասարակական կեանքի մէջ: Իրանով է
զբաղվում, ընթերցող, մեր հասարակութեան այն
մասը, որը, ինչպէս ասեցինք, հետաքրքրվում է
դրսով, և ոչ մի խնդրի, ոչ մի հարցի, որ ուղիղ
որ մեծ նշանակութիւն ունենար նրա համար,
չեն կարող այնպէս նրա հետաքրքրութիւնը շար-
ժել, ինչպէս այն միատեսակ հարցերի մի ամբողջ

շարքը, որ մենք նոր հէնց յիշեցինք:

Ռուսաւարանով ոչ ոք չէ հետաքրքրվում. դուք
ինձ հաւատացէք, այդ հաստատութիւնով հետա-
քրքրվում են ամեն մի գիւղում, որտեղ դպրոց
կայ, դուք մի քանի մարդիկ, որոնք, ի հարկէ,
ոչ թէ հասարակութիւն չեն կազմում, այլ չեն էլ
մասնում այն ամբողջութեան մէջ, որի մասին խո-
սում ենք: Այ՛, ուսումնարան նա ուղարկում է
իր որդուն, բայց թէ ինչ է սովորում նա այն-
տեղ, ինչպէս, ինչպէս են սովորեցնում, ինչ
դրութեան մէջ է ուսումնարանը, արդեօք կարօտ
է մի որ և է օգնութեանը, այդ նա ոչ թէ միայն
չը գիտէ, այլ չէ էլ ուղում գիտենալ. նրան հե-
տաքրքրում է միայն ով է սովորեցնում ուսում-
նարանում և միջամտում է ուսումնարանի գոր-
ծում այն ժամանակ միայն, երբ դպրոցում կը-
ւում են երկու վարժապետ, կամ երկու հոգա-
բարձու. այն ժամանակ մեր հասարակութիւնը
կատարելապէս մտնում է իր դերի մէջ. ամեն
մէկը սկսում է իր ազգականի կողմը պահել, ա-
ռաջ են գալիս այն անվերջ դանդաղանքը, հա-
մակրական և հակակրական անտեղի ցոյցներ և
այլն: Այստեղ, ի միջի այլոց, կը յիշեք և այն,
որ թէ ուսուցիչները և թէ հոգաբարձուները,
քահանաները և նոյն իսկ ժամկէտները օգուտ են
քաղում, ի հարկէ, ժողովրդի, կամ աւելի ճիշդ
կը լինի—հասարակութիւն ներկայացնող անհա-
մաների տրամադրութիւնից և ամեն մէկը աշխա-
տում է առաջ տանել իր ասածը, իր ցանկութիւ-
նը... Անցնում է փոթորիկը, կըքրքրէ այս կամ
այն կերպով բաւականութիւն են ստանում, մո-
ռացութեան է տրվում անձնական վրէժխնդրու-
թիւնը, իսկ նրա հետ, ի հարկէ, և ուսումնարա-
նը...

Այլ պատկեր է ներկայացնում մեր դաւառի

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՊԵՏԱԳՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Յունիսի 16-ին

Հիւանդների հոսանքը շարունակվում է դէպի
հանքային ջրերը, որոնց բոլոր մասերի, զրուպա-
նների սեղանն արդէն երկու շաբաթից ի վեր է,
ինչ պաշտօնապէս բացված է համարվում: Հի-
ւանդների մեծամասնութիւնը կենտրոնացած է
այժմ Պիտաղորդի մօտ, որտեղից այս ամսի վեր-
ջերին մօտ կը սկսեն գնալ դէպի հանքային ջրերի
այլ զրուպանները— Կիւլաօղլու, Էստնուտիկ
ու Ժերէզնաօղլու: Հիւանդների սակաւութիւ-
նը այս տարի չափազանց զգալի է. հիւանդնե-
րը մօտ 2500 հոգի, որոնք հանքային ջրե-
րի վարչութիւնից վերցրել են ջրերում բը-
ժելիլու համար տոմար, այն ինչ անցեալ տար-
վայ սեղանին նոյն ժամանակը այդ թիւն աւելի
բարձր էր, քան թէ հիմա: Այդ պատճառով իսկ
բնակարաններից շատերը, որոնք անցեալ տար-
վայ այս ժամանակ համարեա բոլորը բռնված էին,
հիմա վարձով են սպասում. դա, ի հարկէ, զգա-
լի հարուած է տեղական ազգաբնակչութեան հա-
մար: Բայց չը նայած դրան, բնակարանների դը-
ները չեն ընկնում, և այդ մասին յաճախ դան-
դաւան են լսվում սահմանափակ միջոցների տէր
հիւանդներից, իսկ սրանք ջրերի թիւ այցելուների
զգալի մասն են կազմում: Բայց ինչ և իցէ Պիա-
տաղորդում բժշկվելու (զլիսաւորապէս բնվա-
տիվից, անդամաւորութիւնից և սիֆիլիսից) ա-
մենայամար ժամանակը յոռիս և յուրիս ամիս-
նաւոր շաբաթից մի ժամանակամիջոցում բժշկվելու հա-
մար ջրերի բոլոր զրուպանները հիւանդները
կարող են օգտվել (ի հարկէ, ունեւորները) բանի-
մաց բժշկաների խորհրդով, որոնցից շատերը պրակ-
տիկայի համար ժամանակաւորապէս գալիս են
այստեղ մայրաքաղաքներից, նրանց մէջ կարելի
է հանդիպել և պրօֆէսորներին: Եղանակը այս-
տեղ, Պիտաղորդում առհասարակ չիք է

հասարակութեան միւս մասը. այդտեղ դուք կը
գտնէք պահպանված տակաւին իրանց ամբողջու-
թեամբ մեր հին, վաղմիկ հայեացքները, ձգտում-
ները, ճաշակը. մեր հասարակութեան այդ մասը
ոչինչ հաղորդակցութիւն, ոչինչ կապեր չունի
դրսի հետ, նա միշտ կենտրոնացած կեանք է
վարում, ոչ ոք չէ հետաքրքրվում նրանով և հա-
սարակութեան այդ դաւադարով, որքան կարո-
ղացել ենք նկատել, պատկանում են այն մար-
դիկ, որոնք այլ և այլ պատճառներով կարողա-
ցել են հեռու մնալ նոր կեանքի հոսանքից, որոնք
մինչև այժմ էլ շարունակում են ապրել իրանց
վաղմիկ սովորութիւններով, իրանց հին, պաշա-
կան ձևերով, որոնք շարունակում են հետաքրք-
վել միայն իրանց վիճակով, իրանց հող ու ջրով,
իրանց եղևներով, իրանց հող ու պարով... և հա-
սարակութեան այդ մասը միայն, ընթերցող, կա-
րողացել է պահպանել իր օրէնք ու պոէզիա-
ն ու մ, տարապայման ժամանակների աւերիչ
հոսանքից, այն բոլորը, ինչ որ այժմ թմանդ,
նուիրական է մեզ համար...

Գոմերը մեր երկրի այն վայրերն են, ուր և
ուում է մեր հասարակական կեանքը. վաղ առա-
ւօտանից, մինչև ուղիղ, դուք այդտեղ կա-
րող էք գտնել մեր յիշած դասակարգի բոլոր
մարդկանց. ամեն բան կը լսէք այդտեղ, ամեն
մարդ մի բան է պատմում, խօսակցութիւնը, մեծ
մասամբ, ի հարկէ, կենտրոնացնում է դաւառի
զլիսաւոր արդիւնաբերութեան՝ ցորենի, դարու,
բամբակի, չալթուկի վրա. ամեն մարդ պատ-
մում է թէ ինչ և որքան էր ցանել այս տարի,
որքան ստացաւ, ինչու շատ կամ քիչ, միւսը
նկարագրում է իր հողի յատկութիւնը, երբորը
պատմում է թէ ինչպէս նա օգտվեց այս ամառ
իր խմիչքներից, որոնց անցեալ ձմեռ նա այն-

լինում ամառը, բայց առ այժմ բաւական տա-
նելի է չորհրդի յաճախ տեղացող անձրևների
Քաղաքային ջրանցքն առ այժմ աւարտած լի-
նելով, բուրգաբար և նրան կից փողոցները ջրով
են, թէև երբեմն դա էլ անդոր է լինում յաղթել
Պիատիգորսկի փողոցներում տիրող թողին: Ջրանց-
քի չորհրդով այժմ բնակարաններում կարելի է
ստանալ մաքուր ու սառը ջուր, այն ինչ առաջ
գործ էին անում Պիատիգորսկին կից հոսող Պոդ-
կոնսկի գետի հակառակողական ջուրը: Շնորհով
նոյն ջրանցքի ու բաղնիքի շատրուանները, կու-
րորան այս տարի աւելի լաւ սպասարկութիւն է
գործում, քան անցեալ տարի, բայց այնու ամե-
նայնիս ինչ որ հարկաւոր է հանքային ջրերը լի-
վին կարգի բերելու համար՝ նրա գետ ամենամե-
նշան մասն է իրագործված: Լուրերին նայելով,
ներկայ ամառում Ֆրանսիացի տուրիստների մի
քանի խմբեր, որոնք եկած են Ռուսաստան Մոսկ-
վայի Ֆրանսիական ցուցահանդէսի առթիւ, կայ-
ցել են և նաև կովկասեան հանքային ջրերը: Նը-
րանց մէջ, ինչպէս օգտուում են, կը լինեն և մի
քանի մասնագէտ գիտնականներ՝ դանադան
էկսկուրսիաներ անելու նպատակով եկած: Հա-
ւանական է, որ այդ մասնագէտները այցելու-
թիւնն առանց բարի հետախնդիր չի մնայ կով-
կասեան հանքային ջրերի համար, որոնց համար,
կրկնում ենք, շատ քան կայ անելու դեռ ես:

Նորերս այստեղ կազմակերպւեց վաճառական-
գործակալատարներ մի փոքրիկ ընկերութիւն,
60 հոգուց բաղկացած, որի ամենամօտիկ նպա-
տալն է՝ շաքարովայ մէջ մի աղաւթ օր ձեռք բե-
րել, քանի որ գործակալատարներ այդ ամենաշա-
կան պահանջը, որը այժմ համարաւ ամեն տեղ
այս կամ այն ձևով իրագործված է արդէն, այս-
տեղ ոչ ոքի ուղարկութեան չէ արժանացած մին-
չև հիմա: Յանկայի է, որ Պիատիգորսկի նոր-
ընտրի Գուման, որի մէջ ինտելիգենտ մարդիկ
այժմ աւելի շատ են, քան էին նախկին Գումա-
նում, օգնութեան ձեռք մեկնել անպաշտպան գոր-
ծակալատարներն ու շուտափոյթ իրագործէ նրանց
արդարացի պահանջը:

Անցեալները վերջացան այստեղի հայոց երկսեռ
ուսումնարանների հարցաքննութիւնները, որոնք
ընդհանրապէս լաւ հետեանքներ ունեցան: Ու-
շակերտների ու աշակերտուհիների ընդհանուր
թիւը 30—35-ից չէ անցնում: Այստեղ հայերն
առհասարակ քիչ են: Եղած ընտանիքներն էլ, թէ
հարուստ և թէ աղքատ, իրանց երեխաներին հա-
յոց ուսումնարան են ուղարկում. իսկ եթէ մտա-
դուրէին են ունենում կառավարչական ուսումնա-
րաններն ուղարկել, որոնց թիւն այստեղ փոքր
չէ, այն ժամանակ աշխատում են սկզբնական

պէս խնամքով պահպանել և հետաքրքիրն այն է,
ընթերցող, որ այդ խօսակցութիւնը կրկնվում է
ամեն օր: Ամեն մէկը մեծ ուղարկութեամբ լը-
սում է թէ ինչպէս նրա հարևանի հողից ջուր էր
դուրս տալիս, տեղը դի նա էր, կամ թէ ինչու
այս տարի կորելի բերքը անցեալ տարվանից
պակաս էր, թէև այդ բոլոր պատմութիւնները
ինքն իր ժամանակին անձամբ տեսել է, կամ ար-
դէն լսել է: Գումանի հերթական հարցերից մէկն
է և հարկի, ինչպէս հարցը: Բաւմիքի ստացվե-
լը, թուղիքն ինչպէս և հարկ ժողովելը շատ նշա-
նաւոր բան է համարվում մեր դաւառում: Իր
ժամանակին ամբողջ դաւառը, բաւել բուն նշա-
նակութեամբ, զբաղվում է գրանուի Ամեն մի
գումում, ամեն մի կրպակում, ամեն տեղ դուր
միայն հարկի անուրը կը լսէ, թէ, ի հարկէ,
այդ ինքն ըստ ինքեան մի շատ հին բան է: Գո-
մանում դուր կը լսէք այլ և այլ նկատողութիւն-
ներ թողու անկանոնութեան վրա, կը լսէք բու-
ռն յանդիմանութիւն հարկի անհաստատ բաժա-
նութեան մասին, այնտեղ պատմում են թէ ինչ-
պէս անցեալ օրն այս ինչ մարդու կարպետը,
միւսի կաթնան, երրորդի վերմակը հրապարակ
հանցին խարջի տեղ, թէ ինչպէս հարկ հաւաքող-
ները, ընկերանալով զիւրի ռեսի հետ, ուսում,
սեփականացնում են ռեսիի արիւն-քրտնիքով
աշխատած փողը և այլն: Բայց պէտք է դարձեալ
կրկնեմ, որ այդտեղ, գումանում, հասարակու-
թիւնը բաւականաւոր է միայն այդ անմեղ զը-
րոյցներով: Այդտեղ խօսում են ամեն բանի մա-
սին, ըննադատում են և հասարակութեան տա-
նաւոր են և զիւրի ռեսի և ծառայողներին, բայց
և այնպէս այդ բոլոր խօսակցութիւնները վեր-
ջանում են հենց այդտեղ, այդ մարդիկ ոչինչ
գործ չունեն դրսի հետ, նրանք հեռու են այլ

կրթութիւնը դնէ հայոց ուսումնարաններում
տալ: Աւագ-ուսուցիչ Արթուր քահանայ Շելի-
նեանցի ջանքերով այժմ իրագործված կարե-
ւի է համարել ուսումնարանի շինութեան և գրա-
դարանի հարցը: Գրադարանում այժմ կայ մօտ
հարիւր կտոր գիրք, թէ մանուկներ և թէ հա-
սակաւորների ընթերցանութեան համար: Յանկա-
ւի է, որ մասնաւոր մարդիկ օգնէին Շելինեանց
քահանային հարստացնել գրադարանը, որից տէր-
հօր չորհրդով ձրիապէս կարող է օգտվել ամեն ոք,
իսկ բժշկման սկզբնի ժամանակ, երբ շատ հայեր
են լինում այստեղ, այդպիսի մի գրադարանի գո-
յութիւնը անհրաժեշտ է:

Ս. Տ. Ա.

ՆԱՍՏԱԿ ԽՍՐԱԳՐԻՆ

Յունիսի 30-ին

Թող տուէք դետեղել ձեր լրագրի մէջ հետե-
ւեալ երկաղորդը:

Սրանով պատիւ ունենք յայտնելու մեր բոլոր
բարեկամներին և ծանօթներին, որ մեզանից ան-
կախ պատճառներով անկարող եղանք բանալ
Բաղուս III կարգի մասնաւոր ուսումնարան և
պանսիօն՝ ներկայ սեպտեմբերի 1-ից:

Յաւուր Թաղէտեանց, Լ. Մանուէլեանց, Թ. Բար-
խուդարեանց, Յ. Արթուրեանց.

ՆԵՐՈՒՄԻ ԼՈՒՐԵՐ

Սրանից մի քանի տարի առաջ, որքան յիշում
ենք 1887 թ-ին, էջմիածին քաղաքում պաշտօնա-
պէս գլխավոր հայոց դպրոցներին, յայտնել է, որ
վարժապետները և վարժուհիները մինչև 1891/92
ուսումնական թվականը պէտք է ձեռք բերեն
կատարարութիւնից պահանջվող ուսուցչական վը-
կայականները՝ և նրանք, որոնք ձեռք չեն բերի,
կը զրկվին վարժապետութեան իրաւունքից: Հայոց
ուսուցիչներին և վարժուհիներին շատերը դիմում
են մեզ հարցնելով՝ թէ արդեօք առաջիկայ սեպ-
տեմբերից պէտք է իրագործվի այդ կարգադրու-
թիւնը թէ ոչ: Առաջարկում ենք հոգեւոր իշխա-
նութեան լիութիւնն առաջ հարցաքննել, որ
հարկաւոր ենք համարում նկատել, որ ներկայ
համարի «Ներման հարցը» վերադարձով առաջուր-
դող սպառնութիւնները մեզանից անկախ պատ-
ճառներով, ուղարկւած մինչև այժմ:

Յունիսի 1-ին հայոց թատրոնի գործով հետա-
քրքրվողներին մի խումբ հաւաքված էր Գումանի

դահլիճում, առաջիկայ տարւոյ հայոց թատրոնի
խնդիրը լուծելու համար: Ինչպէս յայտնի է,
սրանից մի քանի ժամանակ առաջ եղած մի ժո-
ղովում ընտրվեց մի մասնախումբ, որը պէտք է
հանգանակէր 2,500 ռուբլի՝ թատրոնական ծախ-
սերը հոգալու համար: Մասնախումբը յայտնեց,
որ հաւաքված է ընդամենը 1,700 ռուբլի միայն,
ուրեմն ցանկացած գումարից 800 ռուբլով պա-
կաս: Ժողովը մէջ կրկին դանադան խօսակցու-
թիւններ սկսվեցան, թէ ինչ պէտք է անել, ար-
դեօք կարելի է յոյս դնել հանգանակութեան
վրա, թէ ոչ, և վերջը վճռվեց շարունակել
հանգանակութիւնը և լրացնել 2,500 ռուբլին:
Ամբողջ տարին թիֆլիսում բնի ունենալու հա-
մար, այն էլ մեծանուն թիֆլիսում, — հարկաւոր
է մի ողորմելի գումար, մի 2,500 ռուբլի, և
թիֆլիսի հայ հասարակութիւնը չէ կարողանում,
կամ աւելի լաւ է ասել, չէ ուղղում՝ առաջ
չնշին գումարը: — Դա կատարեալ իսպառու-
կութիւնն է:

Այս օրերս լոյս տեսաւ «Հայկական գեղար-
արժ» անունով գեղարարական աշխատութիւնը,
որը մի հայ տիկնոջ ձեռքի գործ է, այն է տի-
կին Մարգարիտ Ալեքսանեանի: Հայոց ընթերցող
հասարակութեան պէտք է որ անձնօթ չը լինի
այդ աշխատութեան անուր, որովհետեւ որքան
յիշում ենք, մի երկու տարի կը լինի ինչ յայտա-
բարվում է այդ «Գեղարար» արժով: Տրամաբա-
կութեան մասին: Տիկնոջ այդ գործի մէջ յիշու-
նակութիւն է ներդրել և մեծ աշխատութիւն:
Գեղարարի նկարները այդ տեսակը բաղկացած է
վեց երեսից, որոնց կցված են և աշխատասիրողի
պատկերը և մի կենսապրական առաջաքան նրա
մասին: Ի պատիւ «Արթ» տպարանի, պէտք է
ասել, որ տպագրութիւնը շատ մաքուր է և գե-
ղեցիկ: Արթ 2 ռուբլի: Արդեօք դիւրեւ առնելում
ժլատ հաշը 2 ռուբլի կը տայ այդ արժը գնե-
լու համար, թէ ոչ: — այդ ապագան ցոյց կը
տայ:

ՆԵՐՈՒՄԻ ԼՈՒՐԵՐ ԵՆ. «Հաստատվում է
այն լուրը որ մօտ օրերս Նոր-Բայազետում մեծ
քանակութեամբ կարկուտ է եկել և փչացել է
շատ ցանքեր: Կարկուտից առաջացել է հեղեղ,
որը լաւ քաղաքում և լաւ շրջակայքում տներ է
քանդել և մարդիկ ու կենդանիներ խեղդել:

Յունիսի 28-ից մեզ գրում են ՆԵՐՈՒՄԻ ԼՈՒՐԵՐ
տեսնալը. «Տեղիւ բազմաթիւ վերակացուին երկու
օր առաջ քաղաքային վարչութիւնը արձակեց իր
պաշտօնից, ինչպէս ասում են, մի քանի զինու-
ների համար»:

տեղու տեղ չէ լինում, ամեն մարդ շտապում է
այնտեղ, ժողովուրդը մէջ զարթնում է լսելու և սո-
վորելու փափաղը, տարվայ երկար ամիսների տա-
ժանակիլ աշխատանքներից յետոյ, նա կարել է
զգում մի փոքր էլ հանգիստ, անհոգ կեանք վա-
րելու մէջ և մեր ժողովուրդը այդ կերպարանա-
փոխված կեանքը, նրա նոր, արտակարգ ձգտում-
ներն ու ցանկութիւնները դուր կարող էք տես-
նել գումում: Կարծիքներ և դատողութիւններ քա-
ղաքականութեան մասին, խորհրդածութիւն երկ-
րի և աշխարհի կառավարելու մասին, դիտողու-
թիւններ հարստութեան և աղքատութեան մա-
սին, ուսման կարեւորութեան մասին, դուր կը լսէք
այնտեղ, և դառն յանդիմանութիւն բարքերի և
սովորութիւնների փչանալու մասին, ընդհանուր
բարոյականութեան ընթերցում մասին, այնտեղ ար-
տաքայնութիւն են տրոստըներ և մեր արդի հոգեւոր-
կանութեան մասին, դուր կը լսէք և միջնորդական
յիշողութիւններ մեր կեանքի անցած-գնացած տա-
րիներից, երբ ժողովուրդը ապրում էր հաշտ և սի-
րով, երբ մեր կացութեան պայմաններն աւելի
պարզ, աւելի փոքրապահանջ լինելով, մեր կեանքը
սահման էր ժամանակի հարկի և անվտանգ տարա-
ծութեան միջով...:

Այս հերթը գալիս է աւելի փոքրիկ, աւելի
անմեղ խնդիրներին. գումում երևում են ժո-
ղովրդական երգիչ-աշուղները, յոյնած, կեանքի
դաւանութիւնների տակ ծնւած ամբողջ թափվում
է գումը լսելու իր սրտին մօտ և ծանօթ պատ-
մութիւններ. թափառական արտիստի լարի ամեն
մի հնչիւնը յուզում է ըստ երեւոյթին կողմի,
անդադ հասարակութիւնը, ամբողջ գումը, մի
խողովութիւն դարձած, հետեւած է երկար ու ձկն-
—բանաստեղծը, երբ տեսնում է այն խոր տպա-

ՍՂՆԱՄԻՑ մեզ հաղորդում են, որ յունիսի
16-ին այդ քաղաքի հայոց դպրոցների ուսուցիչ-
ները տեղական սիրողների հետ միասին, հասա-
րակական ժողովարանի դահլիճում ներկայացրին
«Նշի մէկ դոն» պիէսան և մի վողմիլ, յօդու-
ծիական դպրոցների գրադարանի խաղը մի-
ջակ անցաւ: Թղթակիցն ասում է, որ մուտքն
եղաւ 96 ռուբլի մօտաւորապէս: Մինչև այժմ
այդ դրամի մասին ոչ կանոնաւոր հաշիւ է ներ-
կայացրած, ոչ էլ դոյացած դուռ արդիւնքը ոչ
հարկն է հասցրած:

Ինչպէս մեզ գրում են, վրաստանի հայոց թե-
մի առաջնորդը գտնվում է այժմ Սփանիում և
զբաղված է հայոց դպրոցական-հողաբարձական
գործերի և դպրոցական հաշիւների քննութեամբ:

Հանգուցեալ Մակար կաթողիկոսի յիշատակին,
կ. Պոլսի պատրիարքարանի հրամանով, Մուշում
կատարած հոգեհանգստի առթիւ, Մուշից, ի
միջի այլոց, հետեւեալն են գրում «Արեւիքին»,
«Մակար կաթողիկոսն ընդ Տարօնացի էր, Պու-
լանքի Վիդուտ անուն գիւղէն, ուստի իւր պա-
տանկութեան ժամանակը՝ միացած հայ դպրո-
կանաց կարաւանին՝ գացեր և հասեր էր Արա-
րատ: Իւր աստղը պայծառ էր՝ կըսեն էլ մի-
միայն հասեր չը հասեր՝ այս առջ բաց պատա-
նին համակրանք ընդունուր է, նախ աշակեր-
տեր, ապա մեծի դարձեր, և հետզհետէ դրակով
էջմիածին միաբանութեան ուշը՝ մտեր էր հոգե-
ւորական կարգին ներքեւ, ուստի բարձրացաւ
մինչև յաւաք աստիճան հայրապետութեան: Գո-
հովեմբ լսած էինք անցեալ տարի թէ՛ ն. օ.
ծովութիւնը փափաք ունեցել է օգնելու Արթի
Սահակ Հայրապետի մատրան նորոգութեան, և
թէ՛ հայրական գործով կամեցեր էր իւր ծննդա-
վայր գիւղի աղքատ մանկանց կրթութեան: Եւ
պատուի, և դիւրական եկեղեցիակը պայծառա-
ցնել և այլն. դժբաղդաբար՝ եթէ ստոյղ են այս
տեղեկութիւնը, ն. օծովութիւնն առանց իրականա-
ցած անանելու իւր այս բարի դիտաւորութիւնը,
կներ է իւր հանգիստը: Արդեօք ունի կտակ
պատրաստած, և արդեօք չէ մոռցել Սահակայ ա-
մառուս և թիւղուտի լսելը՝ եկեղեցիակը: Տես-
նենք: Տարբարաբար հանգուցեալը կտա կից
առաջագոյն հարց չէ մնացել, որ Մուշին էլ
բաժին հասնէր...»

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԸ

Յունիսի 14-ին տեղի ունեցաւ կ. Պոլսի հա-
յոց Ազգային Ժողովի նիստը, երկար ընդմիջու-

ւորութիւնը, որ թողնում է իր ունեւորները
վրա նրա պատմութիւնը: Այդ բաւականութեամբ
ձրի, կամ ամենաչին վարձատրութեամբ, ի
հարկէ, դուր կարող էք ստանալ ամեն մի գումում
ամեն օր, ամեն գիշեր, բայց գիտե՛ք, ընթերցող
ես շատ անգամ ժամկետով, լուրին հոգեզայու-
թեան մէջ, մի անշուք դուր գրանք աննկատելի
կանգնած, լսել եմ այդ վեպերը և սրտին խոր
բերում միշտ ցաւացել, որ իմ ներկայութիւնը
կարող է խանգարել այն պարզութիւնը և պա-
տմութիւնը, որ իշխում է գումում...:

Բայց սկսում է մեղմանալ եղանակը, դայանք
օրերի հետ բացվում են, բացվում են և գումի
դանքը, ժողովուրդը փոքր առ փոքր սկսում է
ցրվել, վերջ է դրվում և ձմեռային ժողովներին,
գիւղը դատարկվում է, սկսում է եւալ դատա-
րում և այգիներում աշխատանքը, իսկ սրա հետ
և մի քանի ամսվայ մեւելութեանը դատարարու-
վում է և այն հատկացողութիւնը, որ դաւառում
հասարակական կեանք անունն է կրում և որ
մինը, մի քանի դեմով, առիթ ունեցանք ներ-
կայացնելու այստեղ:

Այն, ընթերցող, այն համեստ, այն փոքրիկ
չըջանը, որի մէջ աննկատելի կերպով պոռթ-
կում են գործում մեր աշխարհի տասն և երկու ամիս-
ները, այդ ամիսները նորից վերադառնում, դա-
լիս են, նորից բերում են հին յիշողութիւններ
այդ յիշողութիւնները նորից վերադառնում և նո-
րից գալիս են, այդպիսով կազմվում է ժամա-
նակի այն երկար ու ձկն շղթան, որը պատել է
որպէս մի մատախապատ գիշեր, մեր երկրի ամ-
բողջ տարածութիւնը, մեր երկրի դաւառը, մեր
զիւղը...:

Ս. Ղորղանեան

Խմբագիր-հրատարակող՝ ԳՐԻԳՈՐ ԱՐՇՐՈՒՆԻ

1-1

ПАРФЮМЕРИЯ
ВИКТОРІЯ — РЕТИНА.
мыло олео-вазелиновое
РОЯЛЬ — К О Н Г О.
духи высшаго достоинства
ИКСКОРОНАКСЪ И ВИОЛЕТЪ
О-ДЕ-КОЛОНЪ ЦВѢТОЧНЫЙ
РАЗНЫХЪ — ЗАПАХОВЪ
Въ Высочайше утвержденномъ Кавказ-
скомъ Товариществѣ торговли апте-
карскими товарами въ Тифли-
и Баку.

[illegible]

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ա. ԲԱԼԼԷ ԵՒ ԸՆԿ.

ITOUKYU UZONIR

Պ Ա Ղ Ա Տ Ա Կ Ա Ն Հ Ա Յ Թ Ա Յ Թ Ո Ղ Ն Ե Ր

— ԳՐՈՒԹԻՒՆ —

XX դարի
Սպիտ. եռամսն
Կաղանկիկի վարդ
Զհրմուխայի
Խխանական

Մայիսն ծաղիկ
Պարսից եռամսն
Սպիտակ եռամս.
Գաշտի ծաղիկնը
Սպիտակ խրիս

ՍԵՊՏԵՆԵՐ

ՕԾԱՆԵԼԻՔ

Վ ԱԶԻԻ ԻՆԵԱՆ ՍԱՊՈՆ—Վ ԱԶԵԼԻՆԵԱՆ ՊՈՄԱԴ

Դավանում է ռուսաց կաթներութեան բոլոր քաղաքներում. ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏ ճրխապէս է ուղարկում:

1—5 (1—15)

BATEAUX A VAPEUR FRANCAIS N. PAQUET ET COM.
 ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱՎԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
 Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.

Շոգոհաւերի կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ՄԱՐՍԵԼԻՑ զէպի ԲԱԹՈՒՄ, չորեքշաբթի օրերը, երկուշաբաթը մի անգամ, չորեքշաբթի 9/21 յունվարից սկսած
ԻՒ ՓՈՒԽԱՐԳ

Բաթումից Մարտի, մտնելով Տրապիզոն, Սամսոն, և Կ. Պոլիս:

ԲԱՐՈՒՄՅՑ ՇՈԳԵՆԱԽԵՐԸ ԳՈՐԻՍ ԵՆ ԳԱԼԻՍ				
Զորքշարթի,	17/29 յուլիսի	—	ՍԻԴԱՍԻ	— ԲՕՇԵԼ
—	31 յուլիսի (12 օգոստոսի)	—	ԱՆԱՏՈԼԻԱ	— ԳԱՐՐԻԳ
—	14/26 օգոստոսի	—	ՄԻՆԳՐԵԼԻԱ	— ՃԻՌՈՒԷՆ
—	28 օգոստոսի (9 սեպտեմբերի)	—	ՍԻԿԱՍԱ	— ԲՕՇԵԼ

Լ. ալլն, երկու շաբաթ մի անգամ, ՉՈՐԱՔՆԱԹԻՐ օրերը, 4 ժամին կհաօրից յետոյ, Տօմսկների գները ուղղակի երթևեկումէան Բաթումից գէպի Պարիզ իսկական գնից պակսեցրած են:

Տեղեկությունների համար ճանապարհորդների և բեռների մասին թող բարեհաճին
դիմել ընկերությունս աղետներին. ԲԱԹՈՒՂՈՒՄ ա. Գարանիսին, Նաբերէֆայա,
ԹԵՖԼՈՒՄ ա. Վիկտոր Դ՛ԱՐՆՈՒՆ, ՄԻՋԻՆ-փողոցում, նախկին զինկա ՏԵՐ-Ասատուրովի
տանը, ԲԱԳՈՒՄ, Սամուել Դելլաբովին, Կոլիբրանկինայա հրապարակ, և ՆՈՎՈՐՈՍԻՑ-
ՍԿՈՒՄ ա. Լուի Բրնոյն:

1—12 (ն. շ.)


1—12 (b.



„ՄԻՇՈՒՆԱՅ“

ՄԿԵՐԻ ԿՈՏՈՐԵԼՈՒ ՐԻՍ ԳՈՒՏՄԱՆԻ ՄԻՋՈՅՆԻՐԸ


զրկաւոր պահեստը գտնւում է Թիֆլիսում և խաղւում
գրադոյն նստաւորութեան ղեկավարուն ապրաքնիքի վճարման
կէսուն ընկերութեան մօտ: 38—50 (4)



Մ. Գ. ՅԵՅՏԼԻՆԻ

ՀԱՄԱՅՈՅՆՆԵՐԻ ՄԱԳԱՋԻՆԻ
ՕՊՏԻԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԸ

Պատարի այդու դիմաց, անկիւնի մագաղինում, ստացված է մեծ ընտրութիւն՝ ոսկեայ, նոսկեայ, նիկելեայ, պողպատեայ և կրիայի ոսկերից ԱՆՈՒՅՆԵՐ, ՊԷՆՆԵՆԵՐ և ԼՈՐԵՆՏԵՆԻ: Թատրոնական և դաշայային ԲԻՆՈՎՈՒՄԻ, ՋԵՆՄԱՍԱՍԻ, թէ սենեակներ, թէ դուռը կախելու և թէ վաննաների համար շերտատուգլած և վիպական ունեցող ՄԱԿՍԻՄԻԱ, ջերմաչափեր: Ըօրէկտի և պէնսէի համար ոսկեայ, արծաթեայ, նոսկեայ շղթաներ, նմանապէս մետաքսեայ և մետաղական թելեր:



Ակնոցներ և պեննեներ տրվում են նմանապես բժշկների պատուերով:

Մագաղիսում յանձն են առնում նմանապես փչացած իրերի նորոգելը և ապագիւնների դնելը:

ԳՆԵՐԸ ամենաչափաւոր են:

20-50 (5)

Կրավաճառանցներում սպառված լինելով Պարոնեանի «Ազգային Զօր» շերտը
Թեֆլիսի «ՀԻՍԱՐԱԿԶԱԿՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ» շինում է մասնաւոր անձանց, խնորրելով
ով ունի «Ազգային Զօր» գրքից, լրաց բարեհաճէ վճարով ուղարկել ընկերութեան
ստանկացողները փոքր փոխարէն կարող են նոյն գրքից ստանալ երբ ընկերութեան
ցատանց այդ գրքեր Պոյսից:

ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՆԱԽԱԳՆԱՑՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
MESSAGERIES MARITIMES
(ՄԵՍԱԺԵՐԻ ՄԱՐԻՏԻՄ)

Կանոնաւոր և ուղղակի երթևեկութիւն ԼՕՆԴՕՆԻ և ԲԱԹՈՒՄԻ մէջ և փոխադարձ

Ուրբաթ, 12/24 յուլիսի դուրս կը գնայ ԲԱԹՈՒՄԻՑ GUADALQUIVIR (ԳՈՒԱԴԱԼԿԻՎԻՐ) ԿԻՎԻՐ) շոգենաւը, նաւապետ BERNARD (ԲԵՆՆԱՐ) ԳԷՅԻՐ Կ. ՊՕԼԻՍ, Մարտէշ, Հալլը, Լ.Օնդոն, մտնելով և միջանկեալ, նաւահանգիստները:

Ազգանունը, ԲԱԹՈՒՄՈՒՄ՝ ՄԱՆԱՎԱԶԻ, ԹԻՖԼԻՍՈՒՄ՝ ԳԵՈՐԳ ԷՆՋՈՒՐԵԱՆ ԷՆՋՈՒՐ
ԲԵԱՆՑ, Իսկ ԲԱԳՈՒՆԻ ԿԶ՝ ԳՕԼԴԼՈՍՏ:

1-2